

24-79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ ՄԿՐՏՉԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՂԱԾԽԱՐՀԻ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱԳԵՏՔԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
Մ.Թ.Ա. XVII-IX Դ.Դ.

Է. 00.01- Հայոց պատմություն մասնագիտությամբ
պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -1997

Մեծաբոլոր պրոֆեսոր Հրիշյայ Իովհաննես-սովբեյր
խորիք հարբաշխով և լաբաբոյշ ցածխոբոյշտե-բուծ

Աշխատանքը կատարվել է
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում

Տպ

Կեչեհաճյ

21.11.1997Ը

Պաշտոնական ընդդիմախոսներ

1. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ**
2. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Լ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
3. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ս. Ա. ԵՍԱՅԱՆ

Առաջատար կազմակերպություն
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ:

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է
1997թ. դեկտեմբերի 23-ին ժամը 13-ին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհող 004
մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 375019, Երևան 19, Սարշալ
Բաղրամյան 24⁹):

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության
ինստիտուտի գիտական կաբինետում:

Սեղմագիրն առաքված է «22» նոյեմբերի 1997թ.

Մասնագիտական խորհրդի գիտական
Քարտուղար, պատմական գիտությունների
թեկնածու *Վ. Երևան*

Ս. Ա. ՍԵԼԵՐՈՅԱՆ

ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐԳԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ Հայկական լեոնաշխարհի

և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների բաղադրական պատմության
ուսումնասիրությունը (մ.թ.ա. XVII - IX դդ.) հնարավորություն է ընձեռում ավելի հստակ
ու գիտականորեն ճիշտ բացահայտել հայ ժողովրդի կազմավորման, մեծ
հետաքրքրություն ներկայացնող, բարդ խնդիրը:

Մ.թ.ա. XVII - IX դդ. աչքի են ընկնում Հայկական լեոնաշխարհում և
Հյուսիսային Միջագետքում տեղի ունեցած պատմական կարևոր
իրադարձություններով:

Մ.թ.ա. XVII դարի երկրորդ կեսին Հյուսիսային Միջագետքում ստեղծվում է
հնդարիական դինաստիա ունեցող Միտաննի խուռիական հզոր պետությունը, ավելի
ուշ՝ մ.թ.ա. XV դարի սկզբում, Հայկական լեոնաշխարհի հյուսիսարևմտյան,
արևմտյան և հարավարևմտյան շրջաններում ձևավորվում են հայկական պետության
ակունքները հանդիսացող Հայաստան- Ազգի, Իսուվա, Խեզարանա, Արմատանա,
Արսավանա, Ալգի պետական կազմավորումները, որոնք խուռի-խեթական ռազմական
փոխհարաբերությունների ժամանակ ընդունում են միտաննական կողմնորոշում և
ընկնում միտաննական բազավորների ազդեցության և հովանավորության տակ:

Մ.թ.ա. XIII դարի կեսերին աճկում է սպիրում Միտաննի պետությունը:
Հյուսիսային Միջագետք և Հայկական լեոնաշխարհի հարավարևմտյան շրջաններ են
բախտնցում արամեական քոչվոր ցեղերը: Հյուսիսային Միջագետքում ստեղծվում են
մի շարք արամեական իշխանություններ, իսկ Հայկական լեոնաշխարհում ձևավորվում
են նոր պետական կազմավորումներ: Երկու տարածաշրջանների իշխանությունների
մտահոգության գլխավոր խնդիրը եղել է սկզբում խեթական, իսկ այնուհետև
ասսորական բազավորների պարբերական արշավանքներին դիմագրավելը: Այս

առումով Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմության ուսումնասիրությունը ընդհանուր հիմնահարց է, որի հետազոտությունը վճռական նշանակություն ունի հայ ժողովրդի հնագույն շրջանի պատմության լուսաբանման համար:

ՀԻՄՆԱՀԱՐՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ Բնարկվող հարցի մշակմանը նպաստել են խուրիների և շուբարիների (սուբարիների) պատմությանը վերաբերող օտարազգի հետազոտողների՝ Ա.Ունգնադի, Ի.Գելբի և Ի.Մ.Գյակոնովի ուսումնասիրությունները:

Արքուր Ունգնադը առաջին անգամ հավաքագրել և գիտական շրջանառության մեջ է դրել շուբարիների և խուրիների մասին սկզբնաղբյուրներից քաղված բազմաթիվ տեղեկություններ¹, որոնց հիման վրա նա հանգել է մի շարք կարևոր եզրակացությունների: Տարիներ հետո խուրիների և շուբարիների պատմության հատուկ ուսումնասիրությամբ հանդես եկան Ի. Գելբը² և Ի.Մ.Գյակոնովը³: Նրանք սկզբնաղբյուրների քննության հիման վրա փորձել են ցույց տալ խուրիական հասարակության սոցիալական պատկերի հիմնական գծերը, ուսումնասիրել Առաջավոր Ասիայում որոշ էթնիկական տեղաշարժերի պատմությունը, այդ տեղաշարժերի հետևանքով նոր տարածաշրջաններում նոր էթնիկական խմբավորումների գոյացման հետ կապված քաղաքական իրավիճակը:

1. A. Ungnad. Subartu, Beitrage zur Kulturgeschichte und Volkerkunde Vorderasiens, Berlin und Leipzig, 1936.

2. I. J. Gelb. Hurrians and Subarians / Studies in Ancient Oriental Civilization N 22/ Chicago, 1944. Նույնի. The Early History of the West Semitic peoples. JCS, 15, 1961, N 1, pp. 27-47;

3. И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968. Նույնի Арийцы на Ближнем Востоке: конец мифа. ВДИ, 1970, N 4, с 39-63; Նույնի. Evidence on the Ethnic Division of the Hurrians. - "Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians" New York, 1982, pp. 77-89; Նույնի. Типы этнических передвижений в ранней древности / с конца IV до начало I тыс. до н. э. / - ДВ, 4, 1983, с. 5-23.

Ներկա թեմայի հետ առնչվող մի շարք հարցեր շոշափվել են Է.Վալդների, Ա. Գյոցեի, Ա.Կամսենհուրերի, Կ.Կիչենի, Ռ.Օ'Կարագիանի, Հ.Կլեմգելի, Ն.Յանկովսկայայի, Գ.Գեորգաձեի, Շ. Հոկինգի, Գ. Շվարցի, Մ. Հեյցերի, Գ. Վիլհելմի և այլ հետազոտողների աշխատություններում: Այս հեղինակները իրենց ուսումնասիրություններում խնդիրները քննարկել են հիմնականում Հին Արևելքի պատմության տեսանկյունից: Նրանք շոշափել են նաև Հյուսիսային Միջագետքում ձևավորված Միտաննի պետության պատմության որոշ հարցեր, իսկ Միտաննի պատմության ուսումնասիրությունը, որպես առանձին խնդիր, սկզբնաղբյուրների սղության պատճառով մնում էր որպես Հին Արևելքի և հայ ժողովրդի հին շրջանի պատմության հրատապ խնդիրներից մեկը: Ինչ վերաբերում է միտանական երկրամասին՝ Միտաննի անկումից հետո, ապա պատմագրության մեջ այն դիտվում է որպես Ասսուրական պետության մի մասը, մինչդեռ այնտեղ ձևավորվել են մի շարք արամեական իշխանություններ, որոնք շուրջ երեք դար շարունակ կարևոր դեր են խաղացել ինչպես Հյուսիսային Միջագետքի, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի բնակչության քաղաքական կյանքում:

Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների պատմության առանձին հարցերի լուսաբանման գործում նշանակալի ծառայություն ունեն հայ գիտնականները՝ Ա. Խաչատրյանը, Հ. Մանանդյանը, Ն. Աղոնցը, Ս. Երեմյանը, Գ. Սարգսյանը, Գ. Ջահուկյանը, Ն. Հարությունյանը, Լ. Բարսեղյանը, Վ. Խաչատրյանը, Հ. Կարազոյազյանը, Ա. Քոսյանը և այլք: Նրանք, ի տարբերություն օտարազգի հետազոտողների, իրենց ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել են հայագիտական՝ մասնավորապես հայ ժողովրդի կազմավորման հետ կապված խնդիրների վրա:

Սակայն Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի՝ Միտաննի, արամեական իշխանությունների, Հայաստ-Ազգիի, Մուպպայի (Բսուվայի), Ալգիի, Շուրբիի և մյուս պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա.

XVII- IX դարերում, որպես մեկ խնդիր, հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել, մինչդեռ այդ խնդրի մանրակրկիտ և համակողմանի հետազոտությունը էական նշանակություն ունի ինչպես Հին Արևելքի, այնպես էլ Հայաստանի նախաուրարտական ժամանակաշրջանի պատմության կարևոր ու բարդ հարցերի լուսարանման համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ Ներկա ատենախոսության նպատակն է սեպագիր աղբյուրների վերլուծության հիման վրա հետազոտել Հայկական լեռնաշխարհում և Հյուսիսային Միջագետքում էրնիկական խմբավորումների տեղաշարժերը, նրանց պատմական համագործակցության դրսևորումները, ցեղային միությունների առաջացման, քաղաքական կազմավորումների և պետական իշխանությունների ձևավորման ընթացքը, նրանց քաղաքական պատմությունը, լուսարանել Հայկական լեռնաշխարհի ու Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների և Առաջավոր Ասիայի հարևան պետությունների ռազմաքաղաքական փոխհարաբերությունները, հետազոտել Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում մ.թ.ա. XII-XI դարերում արամեական ցեղերի տարածման հարցը: Նոր փաստերի հիման վրա քննարկել հայ ժողովրդի և հայաց պետականության ձևավորման հետ կապված որոշ խնդիրներ:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ Պատմական Հայաստանի տարածքում մեզ հետաքրքրող քենայի վերաբերյալ, որոշ աստորական տեքստերից բացի, գրավոր աղբյուր չի հայտնաբերվել: Հյուսիսային Միջագետքում Թեյ-Ֆախրիա (Միկանու), Թեյ-Հալաֆ (Գուզանա), Թեյ-Բարա (Տայդա), Թեյ-Անմար (Թիլ-Բարսիպ) բնակավայրերում գտնվել են միայն մի շարք արձանագրություններ: Հիմնահարցի լուսարանման համար անհրաժեշտ սկզբնաղբյուրները հիմնականում մեզ հասել են Բողազ-Բոյ (Խարթուսա) Թեյ-Անառնա (Ախեն-Արոն), Ռաս-Շամոա (Ուգարիտ), Թեյ-Աջանա

(Ալալախ-Մուկիշ), Յորզան-թեփե (Նուզի), Կալաթ-Շերկաթ (Աշշուր) և այլ հնագիտական բնակավայրերից: Այդ աղբյուրներից են քաղաքական պայմանագրերը, դիվանագիտական նամակները, թագավորական տարեգրությունները և այլ բնույթի արձանագրություններ: Դրանք մեծամասամբ գրված են արքայդերեն լեզվով, ստանձնի տեքստեր մեզ հասել են խեթերեն, եգիպտերեն, արամեերեն և լուվիերեն լեզուներով:

Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների պատմության լուսարանման համար որպես աղբյուր վճռորոշ նշանակություն ունեն քաղաքական պայմանագրերը⁴: Դրանցից են խեթական Թեյեպինու և Կիցցուվատոնայի Իշպուտախաշու, խեթական Յիդանտա II և Կիցցուվատոնայի Պիլլիա, խեթական Սուպալիուլիումա I և Հայասայի Խուկկանա, Սուպալիուլիումա I և Կիցցուվատոնայի Սունասուրա II, Սուպալիուլիումա I և Անուրրուի Ազիրու, Սուպալիուլիումա I և Ուգարիտի Նիկմադդա II, Նիկմադդա II և Ազիրու, Սուպալիուլիումա I և Նուխաշշեի Թետտե, Միտաննիի Շառտիվազա և Սուպալիուլիումա I, Սուպալիուլիումա I և Շառտիվազա, Խեթական Մուրսիլի II և Խալպայի (Հալեպ) Թարմի- Շառումա, խեթական Խաբուսիլի III և Անուրրուի Բենդիշինա, Խարուսիլի III և Եգիպտոսի Ռամսես II թագավորների միջև կնքված պայմանագրերը: Այս պայմանագրերի մեծամասնությունը գրված է արքայդերեն լեզվով: Պայմանագրի կատարման երաշխիքը երկու կողմերի աստվածների առջև տված երդումն է: Պայմանագրերում երկու կողմերի իրավունքներից և պարտավորություններից բացի, հաճախ արձանագրվում են տեղեկություններ դարեր

4. Պայմանագրերի տեքստերի մեծամասնությունը հրատարակվել է Է. Վայդների կողմից - տես E.F. Weidner. Politische Dokumente aus Kleinasien. Die Staatsverträge in akkadischer Sprache aus dem Archiv von Boghazkoi, Leipzig, 1923.

առաջ երկու երկրների փոխհարաբերությունների, ու տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների մասին: Այս իրադարձությունների հետ կապված՝ հիշատակվում են քաղաքական և պետական կազմավորումներ, որոնք մեզ հասած վաղ աղբյուրներում չեն հանդիպում, իսկ սրանով հնարավոր է դառնում ճշտել այդ կազմավորումների ստեղծման մոտավոր թվականը և դրանց ռազմական հնարավորությունները:

Ինդրո առարկա հարցի մշակման համար կարևոր տեղեկություններ արձանագրվել են Թեյ-Ամառնայի դիվանագիտական նամակներում⁵: Այս նամակները՝ թվով՝ շուրջ 350 նամակ, կապն աղյուսակների վրա գտնվել են 1887 թ-ին Եգիպտոսի Ամենհոթեպ IV (Լխնաթոն) փարավոնի Ախեն-Աթոն մայրաքաղաքում՝ ներկայիս Թեյ-Ամառնա բնակավայրում: Դրանք Առաջավոր Ասիայի առանձին թագավորների և իշխանների՝ եգիպտական XVIII դինաստիայի փարավոններին ուղարկած պաշտոնական նամակներ են՝ ժամանակի ռազմական իրադարձությունների, դիվանագիտական հարաբերությունների, առևտրական կապերի և քաղաքական զանազան խնդիրների վերաբերյալ: Նամակները թվագրված չեն, դրանք գրված են սեպագիր արքայերեն լեզվով, միայն Միտաննիի Տուշրաստա թագավորի նամակներից մեկը (EA N 24, 494 տողից բաղկացած) գրված է խուրեթրեն լեզվով:

Մասնավորապես հարուստ տեղեկություններ են պարունակում խեթական, ասսորական և եգիպտական թագավորների տարեգրությունները: Դրանք պարզորոշ նկարագրում են Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի նկատմամբ հինարևելյան պետությունների նվաճողական քաղաքականությունը, բնութագրում են ժամանակի ռազմական տեխնիկայի զարգացման աստիճանը,

5. J. A. Knudzon, Die El-Amarna Tafeln, Leipzig, 1915; S.A.B. Mercer. The Tell El-Amarna Tablets, I-II, Toronto, 1939.

հիշատակում են տեղանուններ, պետական գործիչների անուններ և կարևոր պատմական նշանակություն ունեցող իրադարձություններ:

Հարցի ուսումնասիրման համար անհրաժեշտ աղբյուր են հանդիսացել նաև հնագիտական նյութերը և արքայերեն ու արամեերեն լեզուներով գրված արամեական արձանագրությունները: Առանձին արձանագրություններ, որպես պատմական աղբյուր, օգտագործվել են առաջին անգամ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԳԱԿԱՆ ՀԻՄՆԸ. Աշխատությունը շարադրված է պատմաճանաչողական մեթոդաբանությամբ, սկզբնաղբյուրների քննության հիման վրա:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ պայմանավորված է հիմնականում նրա այժմեականությամբ, շրջանառության մեջ դրված նոր նյութերով և ավյալներով, մեկնաբանություններով ու հետևություններով, որոնք կարող են նպաստել ինչպես Հայաստանի նախաուրարտական շրջանի, այնպես էլ Հին Արևելքի պատմության ուսումնասիրությանը: Առենախոսության նյութերը կարող են դասավանդվել հայագիտական և արևելագիտական ֆակուլտետներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ. Առաջին անգամ, որպես մեկ խնդիր, հստակ ուսումնասիրության առարկա է դառնում Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի՝ Միտաննիի, արամեական իշխանությունների, Հայասա-Ազգիի, Ծուպպայի (Իսուվայի), Ազիի, Շուրբեի և մյուս պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII-IX դարերում:

Առաջին անգամ առաջ է քաշվում և հետազոտվում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում մ.թ.ա. XII-XI դարերում արամեական սեմական ցեղերի տարածման հարցը:

Առաջին անգամ հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել Հյուսիսային Միջագետքում արամեական իշխանությունների կազմավորման և նրանց քաղաքական պատմության հարցերը:

Նորովի են լուսարանվում հայ ժողովրդի կազմավորման և հայոց պետականության առաջացման հետ կապված որոշ խնդիրներ:

ԱՌՏՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հայցորդի հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով հրատարակված գիտական հոդվածներում և մենագրությունում: Առանձին հարցերի վերաբերյալ կարդացվել են գեկուցումներ հանրապետական, միութենական և միջազգային գիտաժողովներում, որոշ կարևոր դրույթներ հավանության են արժանացել ԱՊՀ երկրների մասնագիտական գրականության մեջ:

Ատենախոսությունն ամբողջությամբ քննարկվել է 1997 թ. սեպտեմբերի 30-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի նիստում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Աշխատանքը կազմված է մախարանից, հինգ գլուխներից, ժամանակագրական 7 աղյուսակներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից և 3 քարտեզներից:

ՆԱԽԱՐԱՆՈՒՄ հիմնավորված է հետազոտվող թեմայի արդիականությունը և կարևորությունը, սահմանված են ուսումնասիրության նպատակը և խնդիրները, գործնական նշանակությունը, ցույց է տրված ատենախոսության արդյուրագիտական բազան, և ներկայացված է թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. «Հայկական լեռնաշխարհը և Հյուսիսային Միջագետքը հնագույն էթնիկական տեղաշարժերի և պետական իշխանության ձևավորման ժամանակաշրջանում (մ.թ.ա. III-II հազարամյակներում) »:

Առաջին բաժնում (« Մեմական ցեղերի տեղաշարժը և շուրաբիները») ուսումնասիրված է մ.թ.ա. III հազարամյակի սկզբում Արարական թերակղզուց դեպի հյուսիս տեղի ունեցած սեմական՝ արքադական և ամորիական ցեղերի տեղաշարժերի հետ կապված քաղաքական իրավիճակը: Յույց է տրված, որ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում և Հյուսիսային Միջագետքում, որտեղ ի սկզբանե այլ էթնիկական տարրերի հետ բնակվել են շուրաբական ցեղախմբերը, դեռևս մ.թ.ա. III հազարամյակի վերջում իշխում էին շումերական էնսիին (քուրմ- իշխանին) համանման տիտղոս ունեցող իշխաններ և հետևաբար տվյալ տարածաշրջանում մ.թ.ա. III հազարամյակի վերջում արդեն ստեղծվել էին այնպիսի քաղաքական միավորումներ, որոնք զարգանում էին պետական իշխանության ձևավորման ուղիով: Պարզված է, որ գրականության մեջ խուռիական համարվող Թեշշուբ աստվածը և Խերաբ (Խերեբ) դիցուհին ծագումով շուրաբական են: Շուրաբական դեռևս չստուգարանված անձնանուններ՝ Շեքբա, Շուշուկ, Ջարգուր, Մամմա, Ումմե-Խերեբ հիշատակվում են Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում, ուստի դրանց և մյուս շուրաբական քառերի ստուգարանությունը կարևոր է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության տեսակետից: Այս բաժնում ընդգծված է նաև ամորիական արևմտասեմական ցեղերի տարածման ոլորտը: Կապադովկյան և Մարիի արձանագրությունների հիման վրա առաջին անգամ ցույց է տրված, որ ամորիական առանձին ցեղախմբեր մ.թ.ա. XIX-XVIII դարերում հաստատվում են Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում՝ Նփրկերտի շրջանում գտնվող Նիխրիա (Նիխրիա) խոշոր առևտրական կենտրոնում, որտեղ նրանց հաջողվում է գրավել իշխանությունը և ժամանակավորապես ստեղծել իրենց դինաստիան: Այսպիսով՝ հայտնի է դառնում, որ դեռևս մ.թ.ա. II հազարամյակի սկզբում արևմտասեմական

ամորիական ցեղախմբերի զանգվածները հասել են նաև Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտք և առաջին անգամ անմիջական փոխհարաբերությունների մեջ են մտել լեռնաշխարհի հայկական տեղաբնիկ էթնիկական խմբերի հետ:

Երկրորդ քաժինը («Վտուռիական ցեղերի տեղաշարժը և խուռիական քաղաքական իշխանությունների կազմավորումը») նվիրված է խուռիական ցեղախմբերի վաղ շրջանի պատմության ուսումնասիրությանը: Հիմնավորված է այն միտքը, որ մ.թ.ա. III հազարամյակի վերջում Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններից Կիլիկիա, Սիրիա, Պաղեստին, Ուրմիտ լճի ավազան և այլ բնակավայրեր, ներքափանցած սև փայլեցրած խեցու՝ մշակույթը նաև խուռիական է և խուռիների միջոցով է տարածվել այլ երկրամասերում: Յույց է տրված, որ խուռիների տեղաշարժերից հետո տարբեր տարածաշրջաններում ստեղծվում են խուռիական քաղաքական և պետական կազմավորումներ: Առաջին խուռիական պետական կազմավորումը ստեղծվում է Հյուսիսային Միջագետքում՝ Ուրքիշի շրջանում: Այնուհետև մ.թ.ա. XVII-XVI դարերում Հյուսիսային Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս՝ Կիլիկիայի տարածքում, ստեղծվում է խուռի-իուվիական Կիցցուվատնա քաղաքությունը: Նույն ժամանակաշրջանում Եփրատ և Ջեյխան գետերի միջև բնկած տարածքում ձևավորվում են Խաստուվա, Մա՛մա, Տիկունան, Ուրշու խուռիական քաղաքական կազմավորումները, իսկ Քերքուկի շրջանում ստեղծվում է խուռիական Առափխա (Արրափխա) քաղաքությունը:

Նորրորդ քաժինում («Հնդարիական ցեղերի տեղաշարժը և խուռիական Միտաննի պետության ձևավորումը») հիմնավորված է այն տեսակետը, որ Ուրմիտ լճի հարավ-արևմուտքում բնակվող խուռիները, շփվելով այնտեղ ներքափանցած հնդարիական առանձին ցեղախմբերի հետ և դեկավարվելով նրանց կողմից, շայժմում են դեպի Հյուսիսային Միջագետք և դրան հարակից շրջաններ: Հյուսիսային Միջագետքում մ.թ.ա. XVII դարի վերջում ստեղծում են հնդարիական դինաստիա ունեցող խուռիական Միտաննի պետությունը, որն ունի նաև խուռի, (խուրրի)

Խանիզայրատ և Նահրայնա (Նախրայնա) անվանաձևերը: Գրականության մեջ բնորոշված էր, որ Խանիզայրատ-Խուռի-Միտաննի պետությունը ձևավորվել է մ.թ.ա. XVI դարի վերջում, և որ խեթական Խաթուսիլի I քաղափորի (մ.թ.ա. XVII դարի վերջ. XVI դարի սկիզբ) արքայդերեն լեզվով գրված արձանագրությունը, որտեղ առաջին անգամ հիշատակվում է Խանիզայրատ երկիրը, նրա խեթերեն լեզվով գրված տեքստի (Խուռի հիշատակող) ավելի ուշ թարգմանությունն է: Սակայն Խաթուսիլի I -ի արքայդերեն տեքստի լեզվաբանական վերլուծության հիման վրա զույգ է տրված, որ Խաթուսիլի արքայդերեն տեքստը ունի արքայդերեն լեզվի վաղ բարելավված քերականական առանձնահատկություններ, ուստի այն բնագիր է և գրվել է Խաթուսիլի I-ի իշխանության ժամանակ, և հետևաբար Խանիզայրատը Խաթուսիլի I-ի քաղաքությունն էր (մ.թ.ա. XVII դարի վերջ - XVI դարի սկիզբ արդեն ձևավորված էր ⁶: Այս տեսակետը հավանության է արժանացել հետազոտողների կողմից, հատկապես Ա.Պ. Հերկերի մասնագիտական գրականության մեջ ⁷:

Չորրորդ քաժինում («Վտուռիական քաղաքական միավորումների և Խեթական պետության ռազմարադաքական փոխհարաբերությունները մ.թ.ա. XVII-XVI դարերում») լուսարբանված է խեթա-խուռիական առաջին ռազմական բնդիարումների պատմությունը: Յույց է տրված, որ Խուռի- Խանիզայրատ-Միտաննի պետության բանակը վերինեփրատյան խուռիական քաղաքական կազմավորումների զորամիավորումների հետ ներխուժում է Խեթական պետության սահմանները և մեծ հաջողությամբ հասնում են մինչև Խաթուսա մայրաքաղաքը, բայց խեթական Խաթուսիլի I քաղափորը մեծ ջանքերի շնորհիվ կարողանում է հետ մղել խուռիներին և վերականգնել իր երկրի սահմանները:

6. Մանրամասն տես՝ Г. М. Автисая. Государство Митании / Военно-политическая история в XVII-XIII вв. до н. э. / Ереван, 1984, с. 17-18.

7. История древнего Востока II, М., 1988 с. 130; Н.Б. Ялковская. Аштур, Митания, Аррацхэ - История древнего мира, I, М., 1989, с. 185 и т. д.

Վաղ խեթական պետության քաղաքների տարեգրությունների տվյալների հիման վրա նկարագրված են խեթական քաղաքների արչավանքները և այդ արչավանքների ժամանակ ստեղծված քաղաքական իրավիճակը: Հատուկ ուշադրություն է հրավիրված խուռի-լուվիական Կիցցուվատնա պետության քաղաքական դիրքորոշման վրա: Յույց է տրված, որ Կիցցուվատնա քաղաքությունը ժամանակավորապես անցնում է խեթերի կողմը և դրանով մեծապես բուլացնում Միտաննիի և վերինեփրատյան խուռիական քաղաքական կազմավորումների դիրքերը:

Մակայն ավելի ուշ Միտաննին և նրա դաշնակիցները միասնական ուժերով հակահարված են հասցնում խեթերին: Խեթական պետությունը մ.թ.ա. XV դարի սկզբում ծայրահեղ աստիճանի թուլանում է՝ իր տեղը զիջելով Հյուսիսային Միջագետքում զգալիորեն հզորացած խուռիական Միտաննի-Խանիգալթատ քաղաքությունը:

Հինգերորդ քաժնում («խուռի- Միտաննի պետության վերելքի նախնական փուլը մ.թ.ա. XV դարում») հանգամանորեն շարադրված է Միտաննի պետության քաղաքական պատմությունը հնդարիական դինաստիայի առաջին քաղաքների՝ Շուտտառնա I-ի, Պարաառոնայի, Մաուշատարի և Արտադամա I-ի իշխանության տարիներին: Յույց է տրված, որ մ.թ.ա. XV դարի սկզբում՝ Վաղ խեթական պետության անկումից հետո, միտաննական քաղաքները ստիպված են լինում դիմադրել Եգիպտական XVIII դինաստիայի փարավոններին, որոնք արդեն գրավել էին Պաղեստինի և Սիրիայի որոշ շրջանները և փորձում էին իրենց իշխանությունը հաստատել նաև Միտաննիին ենթակա Հյուսիսային Սիրիայի տարածքներում: Մակայն տվյալ ժամանակաշրջանում միտաննական քաղաքներին հաջողվում է ոչ միայն պաշտպանվել, այլ իրենց ազդեցության ոլորտը ներառել Առափխան

(Արրափխա), Աշշուրը, Նինվեհ, Հյուսիսային Սիրիայի երկրները, Կիցցուվատնան, Վերին Եփրատի երկրները և Հայկական լեռնաշխարհի զգալի մասը, և այսպիսով՝ մ.թ.ա. XV դարում Միտաննին դառնում է Առաջավոր Ասիայի ամենահզոր և բնդարձակ պետությունը: Մակայն մ.թ.ա. XV դարի վերջում, երբ Փոքր Ասիայում կրկին զարթոնք է ապրում խեթական քաղաքությունը, Միտաննիի Արտադամա I և Եգիպտոսի Թուրմուս IV (մ.թ.ա. 1400-1390 թթ.) քաղաքները վերջ են տալիս Սիրիայում գերիշխանության համար մղվող եգիպտա-միտաննական երկարամյա պատերազմին և կնքում են հաշտության պայմանագիր, որի համաձայն արևելամիջերկրածովային ավազանի հյուսիսային մասը մնում է Միտաննիին, իսկ հարավայինը՝ անցնում է Եգիպտոսին: Նշված է, որ Միտաննիի Արտադամա քաղաքը իր դատերը կնորթյան է տալիս Եգիպտոսի Թուրմուս IV փարավոնին և այսպիսով՝ սկիզբ է դնում միտաննա-եգիպտական բարեկամական հարաբերություններին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ «Միտաննիի, Եգիպտոսի և Խեթական պետության պայքարը Առաջավոր Ասիայում գերիշխանության համար (մ.թ.ա. XV դարի վերջում և XIV դարի առաջին կեսին)»: Այս գլխում ցույց է տրված, որ մ.թ.ա. XVII դարի վերջում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Արածանի գետի ներքին հոսանքի շրջանում, ձևավորված էր Ծուպպա քաղաք-երկիրը, նշված է նաև, որ մ.թ.ա. XV դարի սկզբում, երբ խեթական պետությունը ճգնաժամ ապրեց, Հայկական լեռնաշխարհում և Վերին Եփրատում պատմական կարևոր ժամանակաշրջան սկսվեց. Ծուպպան մտավ խուռիական ազդեցության ոլորտը, և այդ տարածքում ստեղծվեց խուռիական դինաստիա ունեցող Իսուվա պետական կազմավորումը, բայց մ.թ.ա. IX դարի վերջում, երբ տարածաշրջանում աստիճանաբար ուժեղացավ հայկական էթնիկական տարրի ազդեցությունը, Իսուվան անվանալուծվեց Ծուպա(նի) կամ Ծուպպա՝ հին անունով, և այս հանգամանքը բացատրվում է նախկին ծուպպացիների (ծուպպացիների), հնարավոր է՝ հայկական էթնիկական տարրի, իշխանության վերահաստատմամբ:

Յույց է տրված, որ մ.թ.ա. XV դարի սկզբից Եփրատ և Ջեյխան գետերի միջև գտնվող Խասաուվա, Խախիսա, Մա՛նա, Տիկունան քաղաքական կազմավորումները ընդհանրապես այլև չեն հանդիպում: Դրանց փոխարեն ձևավորվում են Արավաննա, Արմատանա, Կորտալիսա, Թեգարանա և այլ պետական կազմավորումներ: Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում ստեղծվում է Հայասա-Ազգի ցեղային միությունը, Տիգրիսի վերին հոսանքից հյուսիս՝ Իսուվայի հարևանությամբ, կազմավորվում է Ալշե (Ալզի-Աղճնիք) թագավորությունը: Յույց է տրված, որ նորաստեղծ այդ պետական կազմավորումները խուռի-խեթական հետագա ռազմաքաղաքական փոխհարաբերությունների ժամանակ ընդունում են հիմնականում միտաննական կողմնորոշում և հովանավորվում են միտաննական թագավորների կողմից:

Հանգամանորեն լուսաբանված է Միտաննիի, Խեթական պետության և Եգիպտոսի ռազմաքաղաքական հարաբերությունների պատմությունը մ.թ.ա. XIV դարի առաջին կեսին: Թեղ-Ամառնայի նամակների և Բողազ-քյոյի արձանագրությունների հիման վրա նկարագրված են խեթական և միտաննական թագավորների արշավանքները, ճշտված են որոշ իրադարձությունների հաջորդականությունը և ժամանակագրությունը: Յույց է տրված, որ խեթական Խարուսիլի II թագավորը (մ.թ.ա. XV դ. վերջ - XIV դ. սկիզբ) արշավանքներ է կազմակերպել դեպի Հայկական լեռնաշխարհի արևմտյան, Վերին Եփրատի և Հյուսիսային Սիրիայի շրջանները: Նրան հաջողվում է գրավել Թեգարանա, Իսուվա, Արմատանա, Արավաննա, Թեբուրգիա, Ալխա, Թուրմիտա, Խալպա, Նուխաշե, Աշտատա և այլ երկրներ: Այս հաղթանակներից հետո նա հաշտության պայմանագիր է կնքում խուռիական համակարգից մեկուսացված Կիցցուվատնայի Պաղդատիշու թագավորի հետ: Նշված է, որ Խարուսիլի II-ից հետո՝ Թուլլասիա III-ի իշխանության տարիներին (մ.թ.ա. 1390-1374 թթ.) Խեթական պետությունը ենթարկվում է բշնամիների հարձակումներին ու բուլանում է: Առաջվոր Ասիայում կրկին գերիշխող է

դառնում Խուռի-Միտաննի պետությունը: Հենց այս ժամանակ էլ եգիպտա-միտաննական բարեկամական հարաբերությունները ամրապնդելու նպատակով Եգիպտոսի փարավոն Ամենհոթեպ III-ը (մ.թ.ա. 1390-1352 թթ.) իր իշխանության 10-րդ տարեդարձին կնության է առնում Միտաննիի Շուտտառնա II (մ.թ.ա. 1390-1370 թթ.) թագավորի դստերը՝ Գիլուխեբային: Նշված է, որ Շուտտառնա II-ի մահից հետո թագաժառանգ Տուշրատտայի անչափանաս լինելու պատճառով Միտաննիում իշխանության գլուխ է բարձրանում թագավորի Արտաշշումարա որդին (մ.թ.ա. 1370-1355 թթ.), Խաթիում՝ Սուպպիլուլիումա I-ը, Կիցցուվատնայում՝ Սունաստուրա II-ը, իսկ Հայասա-Ազգիում՝ Խուկկանա թագավորը (մ.թ.ա. 1370-1345 թթ.): Բացահայտված է, որ շուրջ 25 տարի (մ.թ.ա. 1380-1355 թթ.) Սերձավոր Արևելքում խաղաղություն է տիրում: Ռիսունասիթված է խեթական Սուպպիլուլիումա I թագավորի գործնությունը: Յույց է տրված, որ իր իշխանության առաջին քսան տարիների ընթացքում Սուպպիլուլիումա I-ը հիմնականում երկու ռազմական արշավանք է կազմակերպել դեպի հարավ-արևելք. առաջինը՝ մոտ մ.թ.ա. 1355 թ-ին Միտաննիի դեմ, որը և վերածվեց առաջին խեթա-միտաննական պատերազմին, երկրորդը՝ մոտ մ.թ.ա. 1350 թ-ին՝ Իսուվայի դեմ: Առաջինի ժամանակ խեթական թագավորին հաջողվում է միտաննական գահի հավակնորդ Արտաղանայի (II-ի) միջոցով Միտաննիում հեղաշրջում կատարել. հեղաշրջման ժամանակ սպանվում է Արտաշշումարա թագավորը, բայց Միտաննիի գահը գրավում է Արտաշշումարայի եղբայրը՝ գահաժառանգ Տուշրատտան, որը պարտության է մատնում Սուպպիլուլիումային և ստիպում է նրան հետ նահանջել: Երկրորդ արշավանքի ընթացքում խեթական թագավորը Լալան հաջողության չի հասնում:

Նշված է, որ այս ժամանակաշրջանում փոխվում է քաղաքական իրադրությունը. խեթական Սուպպիլուլիումա թագավորը դիվանագիտական միջոցներով ռազմական դաշինք է կնքում Հայասայի Խուկկանա և Կիցցուվատնայի Սունաստուրա II թագավորների հետ և բարելավում իր քաղաքական հարաբերությունները նաև

Բարեւոյնի Բունաբարիաշ II քազավորի եւտ: Յույց է տրված, որ այս հաջողություններից ետո Սուպպիլուլիուման ներխուժում է Սիրիա և փորձում իր տիրապետությունը հաստատել այդ երկրում, բայց դա նրան չի հաջողվում, քանի որ Միտաննիի և Եգիպտոսի միջև ռազմական դաշինք է կնքվում, և երկու երկրները միասնական ուժերով ազատագրում են սիրիական քաղաքները Խեթական պետության տիրապետությունից:

ԳԼՈՒՆ ԵՐԲՈՐԳ. «Միտաննիի և հարևան իշխանությունների քաղաքական դրությունը մ.թ.ա. XIV դարի երկրորդ XIII դարի առաջին կեսերին»:

Առաջին քաժմում («Հայկական լեռնաշխարհի և Սիրիայի պետական կազմավորումների քաղաքական կողմնորոշումը խեթա-միտանական II և III պատերազմների ժամանակ») հատկապես ընդգծված է Այզիի քաղաքական դիրքորոշումը: Նշված է, որ այս քազավորությունը գտնվում էր Միտաննիի համակարգում, բայց ի տարբերություն Իսուվայի, Հայասա-Ազգիի և Հայկական լեռնաշխարհի մյուս պետական կազմավորումների, քաղաքական նկատառումներից ելնելով, հոժարական անցնում էր մերթ Խեթական պետության, մերթ Ասորեստանի կողմը և դրանով մեծապես հեշտացնում էր քշնամու առաջխաղացումը դեպի Միտաննի: Յույց է տրված, որ երկրորդ խեթա-միտանական պատերազմի ժամանակ (մ.թ.ա. 1345 թ-ին) երբ խեթերի հարձակման հետևանքով Միտաննիում վտանգավոր իրադրություն է ստեղծվում, Այզիի Անտարատլի քազավորը անցնում է խեթերի կողմը, իսկ Հայասա-Ազգիի Աննիա՝ քազավորը, հավանաբար, Միտաննիի Տուշրատտա քազավորին օգնելու և հետևաբար խեթական քազավորի արշավանքը ձախողելու նպատակով բիկունքից ներխուժում է Խեթական պետության սահմանները: Նշված է, որ Հայասա-Ազգիի ռազմական գործողությունների և միտանական գորքի դիմադրության պատճառով է, որ Սուպպիլուլիումա I-ը հարկադրված է լինում Միտաննիի Վաշշուկանի մայրաքաղաքի մոտ ընդհատել այն հաջող արշավանքը և

փոխել իր երբուղին դեպի արևմուտք՝ Հյուսիսային Սիրիա: Լուսաբանված են նաև խեթա-միտանական երրորդ պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները: Այս պատերազմը, ինչպես ցույց է տրված, տեղի է ունենում 1327 թ-ին՝ խեթական տիրույթների վրա խուռիների, եգիպտացիների և կասկերի հարձակումից ետո. պատերազմի ժամանակ Սուպպիլուլիումա I-ի միջամտությամբ և նրա աջակցությամբ Միտաննիում պետական հեղաշրջում է կատարվում. իր որդիներից մեկի ձեռքով սպանվում է Միտաննիի Տուշրատտա քազավորը. Միտաննիում իշխանության գլուխ է անցնում գահի նախկին հավակնորդ Արտադամա II-ը. նրա որդին՝ Շուտտառնա III-ը նշանակվում է միտանական գորքի հրամանատար: Կարգավորվում են խեթա-միտանական հարաբերությունները: Խեթական քազավորը, որպես մարդասիրական օգնություն, Արտադամա II-ին ուղարկում է եզներ, ոչխարներ, ձիեր և այլ նյութական քարիքներ: Բայց շուտով հանգամանքների քերումով Շուտտառնա III-ը ծեր երից խլում է Միտաննիի գահը և անցնելով Ասորեստանի և Ալեի (Այզիի) կողմը՝ հակադրվում է Խեթական պետությանը: Այս պատճառով՝ Սուպպիլուլիումա I-ը հովանավորում է սպանված Տուշրատտայի փախուստի դիմած որդուն՝ գահաժառանգ Շատտիվազային, և մեծ դժվարությամբ հաստատում է նրան հայրական գահի վրա: Այսպիսով՝ Միտաննի և նրան ենթակա սիրիական և վերինեփրատյան մի շարք քազավորություններ ընկնում են Խեթական պետության ազդեցության տակ:

Երկրորդ քաժմում («Խեթա-հայասական ռազմական ընդհարումները Մուրսիլի II և Աննիա քազավորների իշխանության տարիներին») ցույց է տրված, որ Հայկական լեռնաշխարհի սահմանների պաշտպանության գործում զգալիորեն մեծանում է Հայասա-Ազգիի քազավորության դերը: Լուսաբանված են Հայասա-Ազգիի և Խեթական պետության ռազմաքաղաքական փոխհարաբերությունները: Ընդգծված է, որ խեթական Մուրսիլի II քազավորի՝ դեպի Հայասա-Ազգի կատարած 11-րդ տարվա արշավանքի ժամանակ (մ.թ.ա. 1314 թ.) Հայասա-Ազգիի քազավորը այլևս չի

հիշատակվում, խեթերի հետ բանակցությունները վարում են առանձին բաղաբանների առաջնորդները: Նրանց հաջողվում է կանխել խեթական զորքի առաջխաղացումը դեպի Հայասա-Ազգի կենտրոնական շրջանները և փրկել իրենց երկիրը ավերվածությունից: Նշված է, որ մ.թ.ա. XIV դարի վերջում Հայասա-Ազգի գեղային միության շրջանակներում ստեղծվում են նոր պետական կազմավորումներ՝ Դուկկամա, Ուրա, Խալիմանա, Մուխմու (Յուխմու, Ծուխմու), Կումմախա և այլն, որոնք, աստիճանաբար զարգանալով կարևոր դեր են խաղում տարածաշրջանում պետական իշխանության ձևավորման գործում:

Երրորդ քամնում (Վեթական պետության, Ասորեստանի և Եգիպտոսի պայքարը ազդեցության ոլորտների ընդարձակման համար մ.թ.ա. XIII դարի առաջին կեսին») նշված է, որ մ.թ.ա. XIII դ. առաջին կեսին Խեթական պետությունը մեծ վերելք է ապրում. իրենց հզորությամբ այլի են ընկնում նաև Եգիպտոսը և Ասորեստանը. Հայկական լեռնաշխարհում հայտնի են դառնում Մուծրու (Մուսրու), Շուրբե, Ուրուասրի, Մեխրի պետական կազմավորումները: Խեթական, եգիպտական և ասսուրական արձանագրությունների քննության հիման վրա ցույց է տրված, որ Եգիպտոսի փարավոնը մեծ ջանքեր է գործադրում Սիրիայում իր իշխանությունը վերականգնելու համար. Ասորեստանի թագավորները պատրաստվում են իրենց ազդեցության ոլորտի մեջ ընդգրկել Միտաննին և Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները: Նշված է, որ առաջին հերթին բախվում են Եգիպտոսի և Խեթական պետության շահերը: Խեթերի շուրջ որպես դաշնակիցներ համախմբվում են Միտաննին, կասկիբը, Հյուսիսային Սիրիայի և Փոքր Ասիայի գրեթե բոլոր թագավորությունները: Ընդգծված է, որ Առաջավոր Ասիայի պատմության մեջ Եգիպտոսի դեմ ստեղծվում է առաջին ամենամեծ կռալիցիան. առաջին անգամ Փոքր Ասիայի ծայր արևմուտքի թագավորությունների ռազմիկները հայտնվում են Սիրիայի կենտրոնական շրջաններում՝ Եգիպտոսի դեմ ռազմական գործողություններ վարելու նպատակով: Դակատամարտը տեղի է ունենում մ.թ.ա. 1274 թվականին Օրոնտ գետի

վերին հոսանքի շրջանում գտնվող Կադեշ քաղաքի մոտ: Չնայած Ռամեսսե II-ը իր արձանագրությունում գրում է իր հաղթանակի մասին, բայց իրականում խեթական Մուվառալի թագավորը չի պարտվում. նրա հարավային ռազմահենադաշտը առաջվա պես մնում է Կադեշ քաղաքը: Այս ժամանակահատվածի Առաջավոր Ասիայի երկրորդ կարևոր իրադարձությունն է Ասորեստանի թագավոր Ադադներարի I-ի երկու արշավանքները Խանիգալբատ-Միտաննի պետության Շատտուրա I (մ.թ.ա. 1298-1272 թթ.) և Վասաշատտա (մոտ մ.թ.ա. 1272-1268 թթ.) թագավորների դեմ: Արշավանքների տարեթվերը անորոշ են: Առաջինը, ինչպես ցույց է տրված, կազմակերպվել է կամ խեթա-եգիպտական պատերազմի ժամանակ, երբ միտաննական զորամասերը գտնվում էին Կադեշում խեթերի հետ, կամ էլ պատերազմից հետո, երբ խեթական դաշնակից ջոկատները հոգնած արդեն գորացրվել և վերադարձել էին իրենց երկրները, երկրորդը՝ մ.թ.ա. 1268 թ-ին՝ Վասաշատտայի իշխանության վերջին տարում:

Ցույց է տրված, որ Վասաշատտայի իշխանությունից հետո Միտաննին գտնվում էր Ասորեստանի տիրապետության տակ: Միտաննիի Շատտուրա II թագավորի նամակից⁸ հետևում է, որ մինչ նրա իշխանության գլուխ բարձրանալը Խեթական պետության և Հայկական լեռնաշխարհի որոշ պետական կազմավորումների ռազմական գործողությունների շնորհիվ ազատագրվում է Խանիգալբատ-Միտաննի պետությունը և ժամանակավորապես Միտաննիի գահին հաստատվում է Շուրբե երկրի թագավորը: Նշված է, որ Միտաննիի թագավորի նամակում հիշատակված Շուրբե երկիրը՝ Սասունի տարածքում ավելի ուշ հիշատակված Շուրբե թագավորությունն է, և հետևաբար այս թագավորությունը ձևավորված էր դեռևս մ.թ.ա. XIII դարի առաջին կեսին:

Նորովի են լուսաբանված Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների, Միտաննիի և Ասորեստանի ռազմաքաղաքական փոխհարաբերությունները:

8. E.F. Weidner. Assyrien und Hanigalbat. Ugaritica, VI, 1969, S. 523.

Յույց է տրված, որ մ.թ.ա. 1258 թ-ին Ասորեստանի դեմ ստեղծվում է Միտաննիի, Խեթական պետության, արամեացիների և Կարթեմիշի դաշինքը: Պատերազմում դաշնակիցները պարտության են մատնվում: Միտաննին, Կարթեմիշը, Կադմուխին և Հայկական լեռնաշխարհի ծայր հարավարևմտյան շրջանները ընդգրկվում են Ասորեստանի ազդեցության ոլորտը:

Գ.Ուես Չորրորդ «Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքը և Հյուսիսային Միջագետքը նոր էթնիկական տեղաշարժերի ժամանակ (մ.թ.ա. XIV-XII դդ.)»:

Առաջին բաժնում («Արամեացիների առաջացման հարցի շուրջ») նշված է, որ հինարևելյան գրավոր աղբյուրներում հիշատակված արամեացիների «արումու», «արամու», կամ «արիմե» անվանաձևին մնան տեղանունները և անձնանունները բովանդակությամբ տարբեր են և հնարավոր չէ էթնիկական իմաստով որևէ կապ գտնել նրանց և արամեացիների անվան միջև: Նշված է, որ արամեացիների անունը առաջին անգամ հիշատակվում է մ.թ.ա. XII դարում Ասորեստանի թիզլարպալասար I քաղաքի արձանագրությունում «ավալմայացիներ-արամեացիներ» ձևով: Այս և այլ փաստերի հիման վրա հիմնավորված է այն տեսակետը, թե «ավալմու»-ն արամեացիների մեկ այլ անվանաձևն է, իսկ ավալմայացիները հիշատակվում են դեռևս մ.թ.ա. XIV դարի կեսերից Դիլմունում (ներկ. Բահրայնում) և Բաբելոնից արևմուտք ընկած տարածքում, հետևաբար արամեացիները Արարական թերակղզուց տեղափոխված նույն ավալմայացիներն են:

Երկրորդ բաժնում («Արամեացիների տեղաշարժը դեպի Հյուսիսային Միջագետք և նրանց պայքարը Ասորեստանի դեմ») ցույց է տրված, որ մ.թ.ա. XIV դարի վերջում, երբ Ասորեստանը բավականին հզորացել էր և ձգտում էր իր ազդեցության ոլորտը ներգրավել Հյուսիսային Միջագետքը և Հայկական

լեռնաշխարհի հարավարևմտյան շրջանները, արամեացիները և մյուս արևմտասեմական ցեղախմբերը առանձին զանգվածներով շարժվում են դեպի Հյուսիսային Միջագետք: Նշված է, որ այս ցեղերի տեղաշարժը այդ բարդ քաղաքական իրավիճակում կարող էր տեղի ունենալ Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի իշխանությունների հատուկ կոչով Ասորեստանի դեմ ընդհանուր ճակատ կազմելու նպատակով: Նշված է, որ արամեացիները սկզբում հանդես են գալիս որպես Կադմուխի երկրի, իսկ այնուհետև՝ Միտաննիի և Խեթական պետության դաշնակիցներ: Նկարագրված են ասորական քաղաքների ռազմական արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհ և Հյուսիսային Միջագետք: Նշված է, որ թեև ռազմական գործողությունների ժամանակ Միտաննին պարտվում և դադարում է գոյություն ունենալուց, իսկ Խեթական պետությունը նկատելի չափով բուլանում է, քայց արամեացիները շարունակում են տարածվել ու ամրապնդվել տարբեր շրջաններում:

Երրորդ բաժնում («Ուրարտեացիների առաջացման հարցի շուրջ») ցույց է տրված, որ ուրարտական աղբյուրներում՝ Վեթին Տիգրիսից Խյուսիս՝ Բարման գետի ավազանում հիշատակվող Արմե երկրի անունը առաջացել է այնտեղ՝ մ.թ.ա. XI դարում ժամանակավորապես բնակություն հաստատող արամեացիների՝ ասսորական աղբյուրների արումու (ուղղ. հոգնակի), արիմե (սեռ.հոգն.) անվանաձևից, ճիշտ այնպես, ինչպես գրականության մեջ ընդունված է, որ ուրարտական աղբյուրներում Մուշի և Սասունի տարածքներում հիշատակվող Ուրմե (Ուրմեհի, *Օրմեհի)երկրի անունը առաջացել է ասսորական աղբյուրների Ուրումու ցեղանունից⁹: Հետևաբար, ուրարտական աղբյուրների Արմե և Ուրմե (* Օրմեհի, *Արմեհի)տարբեր երկրների անունները առաջացել են ասսորական աղբյուրների արումու-արիմե և ուրումու երկու տարբեր ցեղանուններից: Հատուկ քննարկված է ուրումեացիների էթնիկական

9. Ս.Տ. Երևմյան. Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում. ՊԲՀ, 1958, N 3, էջ 70-72; И.М.Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 226 - 228; Գ.Խ. Սարգսյան. Ուրարտական պետությունը և հայերը.- Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 56, 92:

պատկանելության խնդիրը. նշված է, որ մ.թ.ա. XII դարի առաջին կեսին աստորական աղբյուրներում, որպես Խեթական երկրի անհնագաճող գինվորներ, կասկեր-արեշլացիների հարևանությամբ և նրանց հետ Ասորեստանի դեմ դաշնակցած, առաջին անգամ հիշատակվում են իրենցից զգալի ուժ ներկայացնող ուրումնացիները: Թե որ կողմից ուրումնացիները կարող էին հարակից լինել կասկերին, այդ մասին նշված է, որ կասկերից հյուսիս ծով էր, նրանցից դեպի արևելք ընկած երկրամասը հեռու էր խեթական ազդեցության ոլորտից և չէր կարող Խեթական երկիր համարվել. կասկերից հարավ-արևմուտք բուն Խեթական երկիրն էր, ուստի մնում էր կասկերից հարավ գտնվող տարածքը, որտեղ կարող էին ապրել ուրումնացիները, այսինքն՝ այնտեղ, որտեղ, ըստ խեթական աղբյուրների, մինչ այդ հիշատակվում էր կասկերի դաշնակից Հայաստա-Ազգի ցեղային միությունը: Յույց է արված, որ ուրումնացի «ուրումնացիներ» տերմինը ունի նաև ուրումնացիները ապրե՞րակը: Այս վերջին անվանաձևը ինչպես լեզվաբանական, այնպես էլ աշխարհագրական տեսակետից առնչվում է Հայաստա- Ազգի արևմուտքում հիշատակվող Ռիրա ռազմավարական կայսեր նշանակություն ունեցող քաղաքի կամ քաղաք-երկրի անվան հետ: Այս և մյուս փաստերի հիման վրա նշված է, որ ուրումնացիները կամ ուրումնացիները ասելով ասորեստանցիները նկատի են ունեցել հայաստական Ռիրա քաղաքի և նրա շրջակայքի բնակչությունը, այսինքն՝ հայաստացիներին¹⁰, որոնք գրավում են իշխանությունը Շուրբեում և որոնց նախաձեռնությամբ Մուշի և Սասունի տարածքներում ստեղծվում է Ռիրն-Շուրբե կամ Արմն-Շուրբե նոր պետական կազմավորումը, որը հետագայում՝ մեծ պետության վերածվելուց հետո բեհիսթունյան արձանագրությունում, ուրումնացիների՝ (ուրումնացիների) Ռիրն-Ռիրնեհի-Մարմեհի

10. Ռիրումնացիների և հայաստացիների նույնության մասին տես նաև Հ.Մ. Ալվեսիայան. Հնագույն էրնիկական տեղաշարժերը. և Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. II-I հազարամյակներում. ՊԲՀ, 1994, N 1-2, 244; Լ.Ա. Բարսեղյան. Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագիտության մեջ. Երևան, 1996, էջ 135:

անունով կոչվում է Արմինա, այսինքն Հայք-Հայաստան:

Արված է այն հետևությունը, թե Հայք-Հայաստանին օտարների կողմից տրված Արմինա անվանաձևը առաջացել է խեթական աղբյուրների՝ հայաստական Ռիրա, աստորական տարեգրությունների՝ ուրումնացիներ-ուրումնացիներ և ուրարտական արձանագրությունների՝ Ռիրն-Ռիրնեհի-Մարմեհի իրար հետ առնչություն ունեցող անվանաձևերից, հետևաբար «հայ» և «արմեն» էթնոնիմները ոչ թե, ինչպես ընդունված է, երկու տարբեր ցեղային միավորումների անուններ են, այլ աշխարհագրական տեսակետից և բովանդակությամբ նույնն են, միևնույն ցեղախմբերի՝ հայաստացիների՝ տարբեր լեզուներով, տարբեր անվանաձևերն են: Այս և ուսումնասիրությունում արված այլ հետևությունները հիմք են հանդիսանում պնդելու, որ հայ ժողովուրդը տեղաբնիկ է և ձևավորվել է Հայկական լեռնաշխարհում՝ իր հայրենիքում:

Չորրորդ քաժմում՝ («Արամեացիների տարածումը Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում և նրանց դերը հակասաստրական պայքարում մ.թ.ա. XII-XI դարերում») նկարագրված են Ասորեստանի Թիզրաք-պարսաք թագավորի՝ դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքները: Բնութագրված են վաղ տեղեկություններ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում արամեական սեմական քոչվոր ցեղերի տարածման մասին:

Հետազոտողների կարծիքով, հայ-արամեական վաղ հարաբերությունները և արամեերեն ու հայերեն լեզուների փոխազդեցությունը տեղի են ունեցել մ.թ.ա. VI-III դարերում, երբ բավականին մեծացել էր արամեերեն լեզվի դերը Պարսկական պետության մեջ¹¹: Այս վաղ ժամանակաշրջանում արամեերենի ազդեցությունը, ըստ Գ. Ջահուկյանի, կարող էր հանդես գալ մի կողմից՝ պաշտոնական գրական լեզվի գործածության, մյուս կողմից՝ հարավի արամեախառն բնակչության հետ շփվելու ճանապարհով: Մակայն աշխատությունում, աստորական թագավորների տարեգրու-

11. А.Г. Перихаян. Два слоя арамейской лексики в древнеармянской лексике /доклад на II Всесоюзной сессии по изучению Древнего Востока 15 мая 1962 г./ ВДИ, 1963 N I, с. 169. Գ.Ֆ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 475-476:

բյունների քննության հիման վրա ցույց է տրված, որ արամեացիները դեռևս մ.թ.ա. XI դարում են տարածվել Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում՝ կոնկրետ՝ Տիգրիս գետի վերին հոսանքից հյուսիս գտնվող Սինարու (Ջենար) և Թիդու բերդաքաղաքներում, Բարձան գետի ավազանում, Շուբբե (Մասունի շրջան) երկրի Մուրարիի քաղաքում¹²: Նշված է, որ Շուբբե երկրում արամեացիները հիշատակվում են նաև հետագայում՝ Մարզոն II քաղափորի իշխանության տարիներին (մ.թ.ա. 721-705 թթ.)¹³: Ցույց է տրված, որ Աշշուր-բեյ-կալայի իշխանությունից հետո արամեացիները և հարևան պետական կազմավորումները նկատելի չափով ուժեղանում են, իսկ Ասորեստանը նրանց ճնշման ներքո խիստ բուլանում ու երկար ժամանակ դուրս է մնում քաղաքական ասպարեզից: Արամեացիների կողմից նվաճվում են ասսորական բերդերը, ավերածության են ենթարկվում բուն Ասորեստանի քաղաքները: Հատկապես ընդգծված է, որ ասսորական այս ճգնաժամին մեծապես նպաստեցին նաև Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները. այդ կազմավորումներից Ուրմե-Շուբբե (Արմե-Շուբբե) երկրի գորամիավորումները շարժվում են դեպի Ասորեստանի տիրապետության տակ գտնվող Մեծ Ջար գետի վերին հոսանքի շրջանները, դուրս են մղում այնտեղից ասսորական կայսրոսներին և իրենց երկրի սահմաններին են միացնում Արիհու, Տուրխու և Ջադուրու քաղաքները¹⁴: Նշված է, որ այս ժամանակահատվածը պատմական կարևոր փուլ է Ուրմե-Շուբբե (Արմե-Շուբբե) երկրի զարգացման ու պետական իշխանության ձևավորման համար:

Գ.ՈՒՆՅ ՀԻՆԳԵՐՈՐԴ «Հյուսիսային Միջագետքը և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքը արամեական իշխանությունների կազմավորման շրջանում մ.թ.ա. X-IX դարերում»։ Այս գլխում ցույց է տրված, որ մ.թ.ա. XIII դարի կեսերին, հյուսի-

12. A. K. Grayson. The Assyrian Royal Inscriptions, II, Wiesbaden, 1976, §§ 242, 641.
13. R. F. Harper. Assyrian and Babylonian Letters. London and Chicago, 1892-1916, §252, Ran Zadok. Notes on the Historical Geography of Mesopotamia and Northern Syria.- «Aber-Nahrain», vol. XXVII, 1989, p. 166.
14. ARI, II, § 422.

Միտաննի պետության կազմալուծումից հետո, Հյուսիսային Միջագետքում իշխանությունը գրավում են արամեացիները:

Նրանք անցնում են նստակյաց կյանքի և միտաննական տարածքում՝ ձևավորվում են Բիթ-Ադինի, Խանիգարատյան (կամ Թեմաննյան), Բիթ-Բախանի, Բիթ-Խալուպե, Բիթ-Չամանի և այլ իշխանություններ:

Բացահայտված է, որ Խանիգարատը խուռիական Խանիգարատ-Միտաննի պետության հնամենի անվանումն է: Մ.թ.ա. I-ին հազարամյակի սկզբին այն արամեական Թեմաննյան տոհմի երեք իշխանություններից կազմված նոր երկիր է, որն ընդգրկել է Խաբուրի վտակ՝ Ջակչակ գետի ավազանը և Կաշիարի լեռների հարավային շրջանները:

Լուսարանված է վերոհիշյալ իշխանությունների քաղաքական պատմությունը, ճշտված են նրանց սահմանները, նկարագրված է Ասորեստանի Ադադ-ներարի II քաղափորի (մ.թ.ա. 911-891 թթ.) արշավանքը դեպի Սեծ Ջար և արևելյան Խաբուր գետերի ավազանները, որտեղ նա բախվում է Կունմանու, Մեխարու, Սալուա և Ուրասարի (Ուրուսատրի) երկրների ռազմական չոկատների հետ: Այս ճակատում Ադադներարի II-ը հանդիպում է նաև Շուբբե երկրի գորամիավորումների դիմադրությանը, բայց հաղթում և Շուբբե երկրի կազմից դուրս է հանում Արիհու, Տուրխու և Ջադուրու քաղաքները: Նշված է, որ այս ուղղությամբ Ասորեստանի քաղափորը հասնում է մինչև Կադմուխի և Ալգի երկրները, բայց չի խորանում դեպի Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջանները, քանի որ նպատակահարմար չէր իր քիկունքում բողոնել Հյուսիսային Միջագետքում իրենցից մեծ վտանգ ներկայացնող արամեական իշխանություններին:

Հանգամանորեն լուսարանված են արամեական իշխանությունների և Ասորեստանի ռազմաքաղաքական փոխհարաբերությունները մ.թ.ա. X-IX դարերում: Ասսորական և արամեական արձանագրությունների քննության հիման վրա ցույց է տրված, որ Հյուսիսային Միջագետքի այն արամեական իշխանությունները, որոնք

հարկադրված ընդունում էին Ասորեստանի տիրապետությունը, դառնում էին ինքնավար իշխանություններ Ասորեստանի համակարգում, որտեղ տեղական փոխարքաներ էին նշանակվում Ասորեստանի քազավորի ընտրությամբ:

Քննարկվում են Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների քաղաքական և ռազմական փոխհարաբերությունները Աշշուր-ճածիր-ապպա II քազավորի (մ.թ.ա. 883-859 թթ.) իշխանության տարիներին: Բացահայտված է, որ մինչ Աշշուր-ճածիր-ապպա II-ի իշխանությունը, հարյուրավոր աստուրական ընտանիքներ սովի պատճառով լքել են իրենց երկիրը և բնակություն հաստատել Շուրբե երկրում. այս կապակցությամբ Աշշուր-ճածիր-ապպա II-ը գրել է « ... Ասորեստանի անօգնական մարդկանց, որոնք կարիքից ու սովից դուրս գնացել էին մյուս երկրներ՝ Շուրբե երկիր, նրանց վերադարձրի և Թուշխա քաղաքում վերաբնակեցրի ...»¹⁵: Սա նշանակում է, որ անկախ քաղաքական հարաբերություններից այլ երկրների քաղաքացիները կարող էին ապաստան գտնել Ռիբմե-Շուրբեում (Արմե-Շուրբեում) Հայաստանի այն կարևոր երկրամասում, որտեղ ձևավորվում էր հայոց պետականությունը:

Նկարագրված են ասսուրական քազավորների արշավանքները արամեական իշխանությունների դեմ: Յույց I տրված, որ արամեացիների երկարամյա և համառ պայքարն Ասսուրական պետության դեմ կարևոր նշանակություն է ունեցել Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների զարգացման և համախմբման գործում: Այդ պայքարով արամեացիները երկար ժամանակ կանխել են Ասորեստանի առաջխաղացումը դեպի Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջանները և, անուղղակիորեն այս տարածքում խաղաղություն ստեղծելով, սրբազանքել են առանձին պետական կազմավորումների, այդ թվում՝ Ռիբարտական պետության ձևավորման ընթացքը:

15. E.A.Budge, L.W.King, Annals of the Kings of Assyria. I, London, 1902, p. 297; АВИИУ, N 23, II, 29; ARI, II, § 550.

Եզրափակման մեջ համառոտ ընդհանրացված են ատենախոսության հիմնական արդյունքները, շեշտված է՝

- Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում և Հյուսիսային Միջագետքում դեռևս մ.թ.ա.III հազ. վերջում ստեղծվել էին քաղաքական կազմավորումներ, որոնք զարգանում էին պետական իշխանության ձևավորման ուղիով:

- Ամորիական արևմտասեմական առանձին ցեղախմբեր մ.թ.ա. II հազարամյակի սկզբում Հյուսիսային Միջագետքում տարածվելուց հետո, ներքափանցում են նաև Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտք և Բաբման գետի ավազանում գտնվող Նիխրիա քաղաքում ժամանակավորապես ստեղծում են իրենց դինաստիան:

- Խուռիական Խանիզարատ-Միտաննի պետությունը ձևավորվել է Հյուսիսային Միջագետքում մ.թ.ա. XVII դարի երկրորդ կեսին և ոչ քե XVI դարի վերջում, ինչպես նշված էր մասնագիտական գրականության մեջ:

- Մ.թ.ա. XV դարում Միտաննին դառնում է Առաջավոր Ասիայի ամենահզոր և ընդարձակ պետությունը: Նրա կազմի մեջ են մտնում Առափխան, Աշշուրը, Նինվեն, Հյուսիսային Սիրիայի երկրները, Կիցցուվատնան, Վերին Եփրատի երկրները և Հայկական լեռնաշխարհի զգալի մասը:

- Մ.թ.ա. XVII դարի վերջում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Արածանի գետի ներքին հոսանքի շրջանում ձևավորված էր Շուպպա քաղաք-երկիրը: Մ.թ.ա. XV դարի սկզբում Շուպպան մտավ խուռիական ազդեցության ոլորտը և այդ տարածքում ստեղծվեց խուռիական դինաստիա ունեցող Իսուվա պետական կազմավորումը, բայց մ.թ.ա. IX դարի վերջում, երբ տարածաշրջանում ուժեղացավ հայկական էթնիկական տարրի ազդեցությունը, Իսուվան անվանակոչվեց Շուպա(նի) կամ Շուպպա՝ հին անունով, և այս հանգամանքը բացատրվում է նախկին ծուպպացիների (ծոփացիների), հնարավոր է՝ հայկական էթնիկական տարրի իշխանության վերահաստատմամբ:

- Հայկական պետության ակունքները հանդիսացող Հայասա-Ազգի, Իսուվա, Թեգարամա, Արմատանա, Արավաննա, Ազգի պետական կազմավորումները ձևավորվել են մ.թ.ա. XV դարի սկզբում:

Հայ-արամեական վաղ հարաբերությունները և արամեերեն ու հայերեն լեզուների փոխազդեցությունը տեղի է ունեցել ոչ թե մ.թ.ա. VI-III դարերում, ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ, այլ դեռևս մ.թ.ա. XI դարից, երբ առաջին անգամ արամեացիները Հյուսիսային Միջագետքից քափանցեցին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտք՝ Բաբման գետի ավազանը:

- Անկախ քաղաքական հարաբերություններից, այլ երկրների քաղաքացիները կարող էին սպաստան գտնել ՈՒրմե-Շուրբե (Արմե-Շուրբե) երկրում՝ Հայաստանի այն կարևոր երկրամասում, որտեղ ձևավորվում էր հայոց պետականությունը:

- «Հայ» և «արմեն» էթնոնիմները ոչ թե, ինչպես ընդունված է, երկու տարբեր ցեղային միավորումների անուններ են, այլ աշխարհագրական տեսակետից և բովանդակությամբ նույնն են, միևնույն ցեղայնների՝ հայասացիների՝ տարբեր լեզուներով տարբեր անվանաձևերն են:

Ատենախոսության բեմայով հրատարակված աշխատություններ

1. Военно-политические отношения между Митанни и Хеттским государством в середине XIV в. до н.э., "Вестник общественных наук" АН Арм., 1977, N 9, с. 104-110 /Ереван/.

2. Хурриты на рубежах Малой Азии до установления могущества Митанни, Древний Восток, 3, 1978, с. 5-24 /Ереван/.

3. Государство Митанни в эпоху войн с хеттским царем Супиллиулиумой I "Историко-филологический журнал", 1978, N I, с. 176-186 /Ереван/.

4. Политическая история Митанни в XVI-XV вв. до н.э., "Вестник древней история", 1978, N I, с. 3-8 /Москва/.

5. Государство Митанни при последних царях индо-арийской династии, "Историко-филологический журнал" 1982, N 3, с. 56-61 /Ереван/.

6. Ранние сведения о распространении арамейских племен по Северной Месопотамии и Армянскому нагорью, "Историко-филологический журнал" 1984, N 3, с. 37-44 /Ереван/.

7. Государство Митанни /военно-политическая история в XVII-XIII вв. до н.э. /, Ереван, 1984, Издательство АН Арм. ССР. - 131 с.

8. Из политической истории государства Кишуваты, "Древний Восток", N 5, 1988, с. 5-15 /Ереван/.

9. Северная Месопотамия в период образования арамейских княжеств, "Кавказ и цивилизации древнего Востока /Материалы всесоюзной конференции, 14-16, IX, 1987 г./ " 1989, с. 58-60 /Орджоникидзе/.

10. On the Role of Aramaean Principalities in the History of Northern Mesopotamia, - «SULMU IV. Everyday Life in Ancient Near East. Papers presented at the International Conference, Poznan, 19-22, September, 1989», Poznan 1993, pp. 22-26.

11. Հնագույն էթնիկական տեղաշարժերը և Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. III- I հազարամյակներում. - «Պատմա-բանասիրական հանդես», 1994, N1-2, էջ 239-246.

12. Արեւմեյան Դարեհ առաջին արքայի բեկխորունյան արձանագրության Արմինա-Հայաստան անվան ծագման շուրջ, «Իրան նամե», 1995, N 4-5, էջ. 19.

13. Հնդարիական ցեղերի տեղաշարժը և խտրիները, «Իրան նամե», 1996, N 2-3, էջ 9-10.

14. Հայկական լեռնաշխարհը խտրի-խեթական ռազմաքաղաքական փոխհարաբերությունների ոլորտում. - «Պատմա-բանասիրական հանդես», 1996, N 1-2, էջ 221-230.

15. Խոտի-Միտանի պետության վերելքի նախնական փուլը (մ.թ.ա. XV դ.), «Գրան նամ», 1996, N4-5, էջ 63-64.

16. Միտանիի և հարևան բազալորորյունների բազալական դրոշմներ մ.թ.ա. XIV դ. վերջում - XIII դարի առաջին կեսին, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 1-2, էջ 225-238.

Грайр Мкртичевич Аветисян.

ПОЛИТИЧЕСКАЯ ИСТОРИЯ ГОСУДАРСТВЕННЫХ ОБРАЗОВАНИЙ

АРМЯНСКОГО НАГОРЬЯ И СЕВЕРНОЙ МЕСОПОТАМИИ

/ в XVII-IX вв. до н.э./

/ резюме/

В настоящее время большой интерес представляет сложная проблема образования армянского народа - автохтонов Армянского нагорья. Для разрешения этого вопроса имеет большое значение выявление малоизученной истории тех этнических и государственных образований, которые существовали во II тыс. до н.э. на Армянском нагорье и на сопредельных с ним территориях Северной Месопотамии и восточной части Малой Азии, что является основной целью предлагаемой нами диссертационной работы.

Основным источником при написании диссертации послужили анналы хеттских, египетских и ассирийских царей, дипломатические письма из Тель-Амарны, политические документы-договоры между царями, а также надписи арамейских князей на аккадском и арамейском языках.

Диссертационная работа состоит из введения, пяти глав, хронологических таблиц, заключения, библиографии и трех схематических карт.

В работе рассматриваются процессы этнических продвижений и формирования ряда государственных образований на территории Северной Месопотамии и Армянского нагорья.

Отмечено, что хурритское государство Митанни было создано в Северной Месопотамии не в конце XVI в. до н.э., как предполагалось, а существовало еще в конце XVII в. до н.э.

Показано, что в начале XV в. до н.э., после распада древнехеттского царства, в качестве ведущей политической силы на Ближнем Востоке появляется государство Митанни, а на территории Армянского нагорья и в восточной части Малой Азии формируются новые государственные образования Исува, Хайаса-Аззи, Алпе / Алзи /, Тегарама, Арматапа, Араванна и др., которые во внешней политике придерживались митанийской ориентации. Таким образом, XV в. до н.э. является одним из важнейших этапов в историческом развитии обществ Армянского нагорья и Северной Месопотамии эпохи бронзы.

Исследованы основные аспекты политической истории Митанни и государственных образований Армянского нагорья, рассматриваются военно-политические взаимоотношения между ними и соседними государствами. В ряде случаев удается представить события в новом освещении и уточнить их хронологию.

Исследуются вопросы распространения арамейских племен. Выясняется, что в конце XIV в. до н.э. арамеи, вместе с другими семитоязычными племенами, уже находились в стране Кадмухи, на юго-западных окраинах Армянского нагорья, а после распада хурритского государства Митанни они прочно укрепились в Северной Месопотамии и отсюда в начале XI в. до н.э. и, может быть раньше, проникли в юго-западную территорию Армянского нагорья, возможно, в качестве наемных войск для борьбы против ассирийской власти.

Важное место занимает проблема происхождения урумейцев - основателей страны Урме /Урмени/ урартских надписей. Показано, что урумейцы с древних времен жили по соседству с касками, то есть на той же территории, где по данным хеттских источников жили хайаспы. Выяснено, что ^{KUR}Uruṣaiṣ^{MES} « урумейцы») ассирийских текстов имеет также вариант ^{KUR}Uruaiṣ^{MES} «уруйцы», что как с лингвистической, так и географической точек зрения сходится с названием укрепленного города Ура на западной территории Хайаса-Аззи. Как вам представляется, урумейцы-уруйды в сущности были хайасскими военными отрядами, которые в процессе падения Хеттского царства вместе с касками-абеншайцами продвинулись на юг, в зону расширения новых военных действий, и по их инициативе в XII в. до н.э. в районе Муша и Сасуна было образовано Урме-Шубре /или Арме-Шубре/ - новое армянское государственное образование.

Подробно изучаются основные аспекты политической истории арамейских княжеств Северной Месопотамии. Рассматриваются военно-политические взаимоотношения между этими княжествами и ассирийским государством. Было показано, что постоянное сопротивление и враждебное отношение арамейцев к Ассирии в течение длительного периода сдерживали проникновение ассирийцев в глубь территории Армянского нагорья и косвенным образом ускорили процессы образования одного из могущественных государств Древнего Востока - Урарту.

Hrayr M. Avetisyan

The political History of State Formations of Armenian

Highland and Northern Mesopotamia

(17th-9th cc.B.C.)



Տպագրված է ՀՀ ԲՈՁ-ի պատվերով

Հանձնված է տպագրության 18.11.97թ. Պատվեր 144: Տպարանակ 70:

Տպագրված է «Դավիթ» կոոպերատիվի տպարանում:
Երևան, Տերյան 72: